ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ԳՀԾՁԲ-20-8/1-2

ք. Երևան 30.04.2020թ.

ՀՀ պաշտպանության նախարարությունը, ի դեմս ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ Ն. Յոլչյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Դասո Պրինտ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Դ. Պետրոսյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող) մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

2.1.4 Ծառայության մատուցման արդյունքում ստացված ապրանքների ընդունման գործընթացն իրականացնել ՀՀ պաշտպանության նախարարի 22.02.2019թ. N 177 հրամանի պահանջների համաձայն (հրամանը հրապարակված է http://mil.am կայքի «Գրադարան» բաժնի «ՀՀ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ ՀՐԱՄԱՆՆԵՐ» ենթաբաժնում):

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված **հինգ** աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է 1909558.06 (մեկ միլիոն ինը հարյուր ինը հազար հինգ հարյուր հիսունութ ամբողջ վեց) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է 15 բանկային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև 10.12.2020թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը սույն պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ծառայության ծավալների կամ ձեռք բերվող ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով ի սկզբանե ծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 11 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

7.13 Սույն պայմանագով նախատեսված՝ Գնորդի իրավունքներն ու պարտականություններն իրականացնում է ՀՀ ՊՆ նյութատեխնիկական ապահովման դեպարտամենտը, իսկ պատասխանատու ստորաբաժանում է հանդիսանում ՀՀ ՊՆ աշխատակազմը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ	ԿԱՏԱՐՈՂ
ՀՀ պաշտպանության նախարարություն	«Դաստ Պրինտ» ՍՊԸ
ՀՀ, ք. Երևան, Բագրևանդի 5	ՀՀ, ք. Երևան, Նորաշեն թաղ. 29, 122
ՀՀ ՖՆՆ գործառնական վարչություն	«Ինեկոբանկ» ՓԲԸ
Հ/Հ 900011144079	Հ/Հ 22030022205441001
ՀՎՀՀ 02522157	ՎՀՀ 00022766
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ	Տնօրեն
Ն. ՅՈԼՉՅԱՆ	Դ. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 1
N ԳՀԾՁԲ-20-8/1-2 պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Գնման առարկայի		
հ/հ	**անվանումը**	**տեխնիկական բնութագիրը**
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ճաշարանում սննդի բացթողման թերթիկների հաշվառման գրքույկ/	100 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 20,5x29,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և երկրորդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, կպցված բլոկի կոնակին վրակար եղանակով՝ մետաղալարով, կոնակը՝ բումվինիլով, 4 սմ լայնությամբ, էջեր հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
2	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մթերքների բաշխում, ձև 66/	Չափը՝ 41,0x29,5սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
3	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Բերման ենթարկվածների հաշվառման մատյան, ձև 6/	200 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 29,0x20,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, բլոկը թելակար, բլոկը կազմի հետ միացնող ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կոնակը՝ բումվինիլով, 6 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում : Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դեպքերի և պատահարների մասին հաղորդվող ինֆորմացիայի հաշվառման, ձև 2/	250 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 29,0x20,5 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի վարման կարգից և 2 -րդ էջի շարունակական կրկնությունից, Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, կպցված բլոկի կոնակին վրակար եղանակով, բլոկը թելակար, բլոկը կազմի հետ միացնող ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կոնակը՝ բումվինիլով, 7 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
5	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի մուտքի հաշվառման մատյան/	250 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 29,5x20,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, բլոկը թելակար, բլոկը կազմի հետ միացնող ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կոնակը՝ բումվինիլով, 7 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
6	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի ելքի հաշվառման մատյան/	250 թերթից, պատրաստի արտադրանքի չափը՝ 29,5x20,0 սմ, չափսերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով քրոմէրզաց ստվարաթղթով, բլոկը թելակար, բլոկը կազմի հետ միացնող ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթից, կոնակը՝ բումվինիլով, 7 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
7	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տրանսպորտային	250 թերթից, պատրաստի արտադրանքի չափը ՝ 29,2x20,5սմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին և վերջին դատարկ էջերից, 2 -րդ և 3-րդ էջերի հաջորդական կրկնությունից: Կազմը՝ տպագրված միակողմ, 1 մ2 մակերեսի 300 գ զանգվածով

	միջոցների գրանցման /վերագրանցման/ մատյան/	քրոմէրզաց ստվարաթղթով, բլոկը թելակար, կռնակը՝ բումվինիլով, 7 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հաստիքապաշտոնային հաշվառման մատյան/	200 թերթից, պատրաստի արտադրանքի չափը ՝ 30,0x21,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 70 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն, կազմված՝ առաջին էջի շարունակական կրկնությունից: Կազմի կազմակողերը 1,5մմ հաստությամբ կազմարարական ստվարաթուղթ պատված 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, շապիկին տպագրություն, բլոկի և կազմակողի միջև ֆորզացը՝ 1 մ2 մակերեսի 120 գ զանգվածով օֆսեթ թղթով, բլոկը թելակար,կռնակը բումվինիլով՝ 6 սմ լայնությամբ, էջերի հանդիպակաց տողերի ուղղաձիգ համընկնում: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած բնագրանմուշի և էլեկտրոնային ֆայլի:
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծառայողական քարտ ձև 9/	Չափը՝ 21,0x29,7 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլով:
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 1//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 2//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 3//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 4//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 5//	Չափը՝ 20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրված՝ 1 մ2 մակերեսի 80գ զանգվածով օֆսեթ թղթով, տպագրությունը գույնավոր ՝ 4x0 , օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հիմնական միջոցների գույքագրման քարտ, ձև ՀՄ - 9 /	Չափը՝ 29,5x20,5, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 160 գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, երկկողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:
16	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ուլտրաձայնային հետազոտություն, ձև 50 գ/	Չափը՝20,5x29,0 սմ, չափերի թույլատրելի շեղում՝ 2մմ, տպագրությունը՝ 1 մ2 մակերեսի 60գ զանգվածով օֆսեթ թղթով, միագույն, օֆսեթ եղանակով, միակողմ, հայերեն: Տպագրական ներկանյութի բավարար օգտագործում, տեքստի ընթեռնելիության ապահովում: Տպագրությունն իրականացնել համաձայն պատվիրատուի տրամադրած էլեկտրոնային ֆայլի:

Ծանոթություն՝ Էլեկտրոնային ֆայլերը կուղարկվեն պայմանագրի կնքումից հետո հինգօրյա ժամկետում մատակարարի տրամադրված էլեկտրոնային հասցեին, իսկ բնագրանմուշները՝ մատակարարի՝ պատվիրատուին դիմելուց հետո տասնօրյա ժամկետում:

ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Գնման առարկայի						
հ/հ	անվանումը	չ/մ	քանակը	միավորի գինը (ՀՀ դրամ)	ընդհանուր գումարը (ՀՀ դրամ)	Ծառայությունների մատուցումը 2020թ. հունիս-հուլիս
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ճաշարանում սննդի բացթողման թերթիկների հաշվառման գրքույկ/	հատ	2000	259,95	519900	2000
2	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մթերքների բաշխում, ձև 66/	հատ	60000	6,8	408000	60000
3	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Բերման ենթարկվածների հաշվառման մատյան, ձև 6/	հատ	93	948,38	88199,34	93
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դեպքերի և պատահարների մասին հաղորդվող ինֆորմացիայի հաշվառման, ձև 2/	հատ	106	1129,24	119699,44	106
5	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի մուտքի հաշվառման մատյան/	հատ	117	1130	132210	117
6	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի ելքի հաշվառման մատյան/	հատ	116	1127,58	130799,28	116
7	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տրանսպորտային միջոցների գրանցման /վերագրանցման/ մատյան/	հատ	40	1147,5	45900	40
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հաստիքապաշտոնային հաշվառման մատյան/	հատ	130	930	120900	130
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծառայողական քարտ ձև 9/	հատ	3000	9	27000	3000
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 1//	հատ	1000	7,95	7950	1000
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 2//	հատ	1000	7,95	7950	1000
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 3//	հատ	1000	7,95	7950	1000
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 4//	հատ	1000	7,95	7950	1000
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 5//	հատ	1000	7,95	7950	1000
15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հիմնական միջոցների գույքագրման քարտ, ձև ՀՄ - 9 /	հատ	20000	8,76	175200	20000
16	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ուղտրաձայնային հետազոտություն, ձև 50 գ/	հատ	30000	3,4	102000	30000

Ծանոթություն՝ Ծառայության արդյունքը մատակարարվելու է ՀՀ ք. Երևան, Բագրևանդի 5, ՀՀ ՊՆ տարածք:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈՒԼՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դասո [illegible]» ՍՊԸ տնօրեն

[illegible]ԵՏՐՈՍՅԱՆ

Հ. ա. Ա. [illegible]

Հավելված N 2
N ԳՀՇՁԲ-20-8/1-2 պայմանագրի

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

ՀՀ դրամ

Գնման առարկայի			Նախատեսվում է ֆինանսավորել 2020թ. ըստ ամիսների, բայց ոչ ուշ, քան 10.12.2020թ., ընդ որում՝						
h/h	անվանումը	CPV կոդը	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր
1	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ճաշարանում սննդի բացթողման թերթիկների հաշվառման գրքույկ/	79821200/97	519900	519900	519900	519900	519900	519900	519900
2	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մթերքների բաշխում, ձև 66/	79821200/98	408000	408000	408000	408000	408000	408000	408000
3	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Բերման ենթարկվածների հաշվառման մատյան, ձև 6/	79821200/111	88199,34	88199,34	88199,34	88199,34	88199,34	88199,34	88199,34
4	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Դեպքերի և պատահարների մասին հաղորդվող ինֆորմացիայի հաշվառման, ձև 2/	79821200/112	119699,44	119699,44	119699,44	119699,44	119699,44	119699,44	119699,44
5	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի մուտքի հաշվառման մատյան/	79821200/115	132210	132210	132210	132210	132210	132210	132210
6	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հեռագրերի, հեռախոսագրերի ելքի հաշվառման մատյան/	79821200/116	130799,28	130799,28	130799,28	130799,28	130799,28	130799,28	130799,28
7	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Տրանսպորտային միջոցների գրանցման /վերագրանցման/ մատյան/	79821200/119	45900	45900	45900	45900	45900	45900	45900
8	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հաստիքացուցակային հաշվառման մատյան/	79821200/125	120900	120900	120900	120900	120900	120900	120900
9	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ծառայողական քարտ ձև 9/	79821200/135	27000	27000	27000	27000	27000	27000	27000
10	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 1//	79821200/141	7950	7950	7950	7950	7950	7950	7950
11	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 2//	79821200/142	7950	7950	7950	7950	7950	7950	7950
12	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 3//	79821200/143	7950	7950	7950	7950	7950	7950	7950
13	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 4//	79821200/144	7950	7950	7950	7950	7950	7950	7950
14	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Մարտական թերթիկ /ԲԿ 5//	79821200/145	7950	7950	7950	7950	7950	7950	7950

15	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Հիմնական միջոցների գույքագրման քարտ, ձև ՀՄ - 9 /	79821200/149	175200	175200	175200	175200	175200	175200	175200
16	Այլ պոլիգրաֆիական արտադրանքի տպագրման ծառայություն /Ուղտրաձայնային հետազոտություն, ձև 50 գ/	79821200/167	102000	102000	102000	102000	102000	102000	102000

** Վճարման ենթակա գումարները ներկայացվում են աճողական կարգով:*

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ պաշտպանության նախարարություն
ՀՀ ՊՆ ՆՏԱ դեպարտամենտի պետ

Ն. ՑՈՒԼՁՅԱՆ

ԿԱՏԱՐՈՂ

«Դասո Փրինտ» ՍՊԸ տնօրեն

Ա. ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հավելված N 3
N ԳՀԾՁԲ-20-8/1-2 պայմանագրի

Պայմանագրի կողմ	Պատվիրատու
_____	_____
_____	_____
գտնվելու վայրը _____	գտնվելու վայրը _____
հհ _____	հհ_____
հվհհ _____	հվհհ_____

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

_____

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____» «_____» 20 թ.
Պայմանագրի համարը՝ _____
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

N	Մատուցված ծառայությունների							
	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական ցուցանիշը		կատարման ժամկետը		Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց	Ծառայությունն ընդունեց
_____	_____
ստորագրություն	ստորագրություն
_____	_____
ազգանուն, անուն	ազգանուն, անուն
Կ.Տ.	Կ.Տ.

Հավելված N 3.1
N ԳՀԾՁԲ-20-8/1-2 պայմանագրի

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____-ի
Պատվիրատուի անունը Կատարողի անունը
(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____ -ին կնքված N _____
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
անվանումը	չափման միավորը	քանակը (փաստացի)

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն

Ընդունեց
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

_____
ազգանուն, անուն

_____
ստորագրություն